

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28/2

13 հուլիսի 2012թ.

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 03.07.2012թ-ի նիստում քննության է առնվել «Էլեկտրադիզայն» ՍՊԸ 25.06.2012թ. թիվ Ն-11 գանգատը « ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ կողմից շահութահարկի գծով լրացուցիչ տույժ հաշվարկելու վերաբերյալ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն «Էլեկտրադիզայն» ՍՊԸ գանգատը մերժվել է: Մասնավորապես, «Էլեկտրադիզայն» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) գանգատում նշված է.

Սույն թվականի հունիսին ընկերությունը տեղեկացվել է, որ ընկերության նկատմամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 6-րդ կետի խախտման համար հաշվարկվել է տույժ: Ընկերության կարծիքով նշված տույժը հետևանք է Մաշտոցի ՀՏ աշխատակիցների կողմից «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի սխալ մեկնաբանության և հակասում է օրենսդրությանը: Մասնավորապես, «Էլեկտրադիզայն» ՍՊԸ-ն հարկային տեսչություն է ներկայացրել հայտարարություն 2011թ. շահութահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու վերաբերյալ, որի համաձայն 2011թ. I եռամսյակի համար նախատեսվել է շահութահարկի կանխավճար 187 000 դրամ, իսկ II, III և IV եռամսյակների համար՝ 0 դրամ:

2011թ. դեկտեմբերին պարզ դարձավ, որ ընկերությունը կունենա հարկվող շահույթ և հետևաբար դեկտեմբերի 20-ին վճարվեց ևս 1 522 000 դրամ կանխավճար:

Արդյունքում 2011թ. համար ընկերության կողմից վճարված շահութահարկի գծով կանխավճարների հանրագումարը կազմում է 1 709 000 դրամ, որը գերազանցում է 2011թ. համար վճարմանը ենթակա շահութահարկի (2 217 507 դրամ) գումարի 75%-ը:

Համաձայն 2010 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 11 (համաձայնեցված է ՀՀ Ֆինանսների նախարարի հետ 2010 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 647-Ն) «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի կիրառման մասին որոշ հարցերի վերաբերյալ» պաշտոնական պարզաբանման, այն է՝ Օրենքի 47-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում տույժեր չեն հաշվարկվում, եթե ամբողջ տարվա համար (այդ բվում՝ մինչև շահութահարկի ամսական կանխավճարների ինքնուրույն որոշման մասին գրավոր դիմումի ներկայացումը) հաշվարկված կանխավճարների վճարված գումարների հանրագումարը գերազանցում է տվյալ տարվա հաշվարկված փաստացի շահութահարկի 75%-ը, իսկ այդ պայմանը չսպաստվելու դեպքում տույժերը հաշվարկվում են ռեզիդենտի կողմից ամսական կանխավճարների մեծությունն ինքնուրույն որոշելու մասին գրավոր հայտարարությունը ներկայացնելուն հաջորդող առաջիկա կանխավճարային մուծման վճարման ժամկետից սկսած, և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 6-րդ կետը, այն է՝ պաշտոնական պարզաբանումները պարտադիր բնույթ չունեն, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում անձինք իրավունք ունեն առաջնորդվել պաշտոնական պարզաբանումներով, ընկերությունը կարծում է, որ Մաշտոցի ՀՏ-ն սխալվել է՝ կիրառելով տույժ փաստացի ստացված շահութահարկի 18.75 տոկոսի և տվյալ եռամսյակի փաստացի վճարված կանխավճարի տարբերության գումարի նկատմամբ:

Վերը նշվածը հաշվի առնելով «Էլեկտրադիզայն» ՍՊԸ-ն խնդրում է պարտավորությունները վերահաշվարկել և հանել հաշվարկված տույժը:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության գլխավոր հաշվապահի և Մաշտոցի ՀՏ ներկայացուցչի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 6-րդ կետի. «Նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող շահույթը պակաս նախատեսելու դեպքում հարկատուն կանխավճարի եռամսյակային մեծությունը որոշում է ինքնուրույն՝ հարկային

տեսչության մարմիններ ներկայացնելով վերադաս հարկային մարմնի կողմից հաստատված ձևի հայտարարություն: Հաշվարկված կանխավճարների տարեկան հանրագումարը տվյալ տարվա փաստացի շահութահարկի 75 տոկոսից պակաս լինելու դեպքում հարկատուն վճարում է տույժ՝ փաստացի ստացված շահութահարկի 18.75 տոկոսի և տվյալ եռամսյակում փաստացի վճարված կանխավճարի տարբերության գումարի նկատմամբ՝ կանխավճարի վճարման համար սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված օրվանից մինչև հարկային տեսչության մարմինն փաստացի շահութահարկի գումարը հայտնի դառնալու (շահութահարկի հաշվարկը ներկայացնելու) օրը:

Նույն մոտեցումն է սահմանված նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի կիրառման որոշ հարցերի վերաբերյալ» 01.10.2010թ. թիվ 647-Ն պաշտոնական պարզաբանմամբ: Մասնավորապես, Օրենքի 47-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում տույժեր չեն հաշվարկվում, եթե ամբողջ տարվա համար (այդ թվում՝ մինչև շահութահարկի ամսական կանխավճարների ինքնուրույն որոշման մասին գրավոր դիմումի ներկայացումը) հաշվարկված կանխավճարների վճարված գումարների հանրագումարը գերազանցում է տվյալ տարվա հաշվարկված փաստացի շահութահարկի 75%-ը, իսկ այդ պայմանը չապահովվելու դեպքում տույժերը հաշվարկվում են ռեզիդենտի կողմից ամսական կանխավճարների մեծությունն ինքնուրույն որոշելու մասին գրավոր հայտարարությունը ներկայացնելուն հաջորդող առաջիկա կանխավճարային մուծման վճարման ժամկետից սկսած:

Այսինքն, նույնիսկ հիշատակված պաշտոնական պարզաբանման դրույթներից ակնհայտ է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված տույժերը չհաշվարկվելու համար պարտադիր պայման է երկու պայմանների, այն է՝ համապատասխան կանխավճարների հաշվարկված և վճարված լինելու, միաժամանակյա առկայության հանգամանքը:

Քննարկվող դեպքում «Էլեկտրոնիկային» ՍՊԸ-ն հարկային տեսչություն է ներկայացրել հայտարարություն 2011թ. շահութահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու վերաբերյալ, որի համաձայն 2011թ. I եռամսյակի համար նախատեսվել (հաշվարկվել) է շահութահարկի կանխավճար 187 000 դրամ, իսկ II, III և IV եռամսյակների համար՝ 0 դրամ:

Ինչ վերաբերվում է 2011թ. դեկտեմբերին ընկերության կողմից վճարված 1 522 000 դրամին, ապա Հանձնաժողովի համոզմամբ այն չի կարող դիտվել որպես շահութահարկի հաշվարկված կանխավճարի վճարված գումար, քանի որ այդպիսին համարվելու համար այն նախապես պետք է հաշվարկված և սահմանված ժամկետներում վճարված լիներ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Էլեկտրոնիկային» ՍՊԸ գանգատը մերժել:

Որոշմանը չհասանելով, դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ